

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 9

(ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

2 ՄԱՐՏ 1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՆԱՐԳՈՒԱԾ ՆԻԻԹԸ (խմբագրական)	S. Ա.
ՍԱՐԵՐՈՒ ՏՂԱՆ (նորավեպ)	Ռ. ՋԱՐԴՍԱՐԵԱՆ
ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ. Վերագործ	ՍԴԵԼԼԱ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ	
Ցայգերգ	Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ
Մքին սիրս	ՎԱՐԴԳԷՍ
ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՒՆԷՆ. Թաղումը	ՄԵՆԱՍԷՐ
ՀԱՆՃԱՐ ԵՒ ՏԱՂԱՆԻ (վերջին մաս)	ՄԱՔՍ ՆՕՐՏԱՈՒ
ԲԱՐԻՋԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԴ. Վիքոր Հիւկոյի հարիւրամեակի հանդեսները	
ՅՈՒՇԱՏԵՐ	

Մասիս շաբաթաբերի շարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ դր. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ դր., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 ռուպլի : Թղթատրական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն : Մասիս հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առսու, եւ կը գտնուի Բեռլինի բոլոր ծխախմաններուն ու Պահչե-Գաբուի ջրալանառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրալանառներուն, եւ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԷ

در علیہ غلطہ « ماسیس » غزتیسی اداره می

ԵՄԲԱԳԲՈՒԹԻՒՆ « ՄԱՍԻՍ » Ի

Կ. Պոլիս, Ղալաթիս, Նորաստեղծական խան

Rédaction de la Revue MASSIS


Galata, Constantinople

Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին մէն տեսակ շապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ:

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպամաներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունիլ ու հատարեալ հոգածութեամբ պատրաստել հարանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ:

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներ օձիք, թեւնոց, ֆլանէլ, գուլպայ, թաշկինակ, ոսկեզօծ կոճակներ, փողկապ, դրամապիս, զմեկի «Չէֆրիտ», խոզանակ, սանտր ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ Մ. ՏԵՐ-ԴԱԽԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, ապրանայ ազնուութեան յանձնարարութեանց խնամով պատրաստութեան, ու գիներու աժանութեան տեսակէտ վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուններէն մէկն է:

ԳԻՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ



Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ու ոտքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, լայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործութեամբ, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ԲԵՐԱ, ՄԵԾ փողոց, Կալաթա Սէրայի Լիւսէին դիմաց:

- | | | |
|--------|---|--|
| ԿԱԼԱԹԱ | { | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամկէյին կայարանին Դիմաց |
| ՊՈԼԻՍ | { | 1. Սուլթան Համամ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ. |

Դասերը եւ նորոգութիւնք ձգի.

Կասաբեալ երաւեստորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր ֆաղաֆներուն մէջ

ՇԱՊԻԿԻ
ՄԱՍՏԱՏԵԱԼ ՎՃԱՌԱՏՈՒՆ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 2 ՄԱՐՏ 1902 —

ԹԻԻ 9

ԱՆԱՐԳՈՒԱԾ ՆԻՒԹԸ

Բարեկենդանի պայմանագրական Բրոնիկ-
ներէն հաքը՝ Դիմակին չուրջը գարձոյ յաւի-
տնապէս՝ կարգը Մեծ-Պահքի յօդուած-
ներունն է, ընկերային ու կրօնական «աւուր
պատշաճի»ներ որոնք՝ որքան ալ աւանդական
գրոյմը կրեն՝ միշտ պէտպիսութիւնն մը կըն-
ծայեն լրացրական առօրեայ նիւթերուն, —
զէթ այն պէտպիսութիւնը զոր կուտայ հինը
նորոգուելով :

Մինչ ընկերաբան զրիչներ — կամ ինք.
զինքնին աջնպէս կարծողներ — խորունկ
հայեցողութիւններով պիտի զբաղին, ու
եկեղեցականները՝ խրթին մեկնաբանութիւն-
ներով, առիթէն կ'օգտուին ընտանեկան
չառ պարզ նիւթի մը մօտենալու հա-
մար : Եւ ապահով եմ որ Մասիւնի շնոր-
հալի ընթերցողները պիտեանքով չի
պիտի ժողովն քղանցքնին ո՛չ ալ զըզ-
ուանքի արտայայտութիւնն մը պիտի առնէ
զէմքերին, իմանալով որ քրքրելիք հարցս
կը վերաբերի . . . շուսցի, արդուիկի եւ Տը-
նախան մնաքութեան, երբ աւելցնեմ թէ բա-
րեկենդան թերթ մըն է, ու է՛ն աշխարհիկե-
րէն մէկը, որ կը հայթայթէ այս ստիպել ու
անարգութեամբ համարուող նիւթը :

Երեւակայեցէք՝ Մարտէլ Բրէվոյի, Բա-
թիւլ Մէնտէսի, Ալֆօնս Ալէի պէս աշխա-
տակիցներու նորալէզներովը ու ֆանթէզի-
ներովը լեցուն թերթ մը որ կը գանդատի
թէ Բարեկենդանը պէտք եղածին չափ . . .
տանախիկն չեն : Եւ այնքան լուրջ է իր գան-
դաբը, որ զայն արդարացնելու համար օրի-

նակ կը բերէ Ամերիկուէին, նոր աշխարհի
կիներ, զոր մենք՝ Եւրոպացի կիներէն աւելի
քանահաճ, ինքզինքը դրօսանքի ու պտոյտի
միայն առող կը կարծենք, եթէ հարուստ է,
կամ բոլորովին առնական սովորութիւններու
հետեւող, եթէ արհեստով կամ առեւտուրով
հացը ճարելու հարկին մէջ կը գտնուի :

Ասոր բոլորովին հակառակ է գծումը պատ-
կերը, մինչեւ աստիճանն մը հայ խաթուն-
կիներու անհետացող արագարին համապա-
տասխանող, մաքրասէր ու աշխատասէր :
«Ամերիկուէին, որ չի քաջուիր արհեստա-
բանի մը կամ վարչութեան մը մէջ աշխա-
տելէ, գիտէ նաեւ, երբ ընտանեկան բեռ
ունի վրան, ծայրայեղ կոկիկութեամբ ու
մաքրութեամբ պահել իր առանին յարկը :
Պզտիկ յաղկութիւնն մը չէ տանախրուհիի մը
համար՝ առանց ազատուելու իր փափուկ ձեռ-
քերը, հրահանուել իր սպասաւորներն ու
սպասուհիները, եւ կարգ-կանոն հաստատել
որոնք նայնքան անհրաժեշտ են ընտանեկան
հանգստաւէտութեան համար որքան մեծ
հաստատութեան մը բարեկարգութեանը հա-
մար» :

Մինչեւ հոս, ընդհանուր գիծերը միայն
կրեւան նոր Աշխարհի կնոջ առանին ձիւ-
քերուն, որոնք մասնաւորապէս հետաքրք-
րական բնոյթ մը չունին մեզի համար : Բայց
ահա թէ ի՛նչ կաւելցնէ Փրանսայի քրոնիկա-
զիրը . «Այսպէս, քանի մը օր առաջ, Մի-
ացեալ Նահանգաց բոլոր քաղաքներու առ-
ներուն մէջ կատարուեցաւ վեցամսեայ մեծ

մաքրութիւնը (nettoyage), — գորգերը վերցնել, ձեղունները չփել, կարասիները լուալ, անկողինները քրքրել, եւայլն, եւայլն»։ Մեծ-Պահրի առթիւ մեր յարկերուն տակ կատարուող առանձին աշխատանքներու պատկերը գծուած է՝ ք տեսներ այս քանի մը տուելով — աշխատանք որ արհամարհոտ նայուածքներու կամ հեգնոտ ակնարկութիւններու առարկայ կը դառնայ այն թեթեւամիտ երիտասարդներուն ու ծիծաղելիօրէն յաւակնոտ աղջիկներուն կողմէ որոնք արտաքին երեւոյթը միայն կը փնտռեն, նոյն իսկ մաքրութեան մէջ ։

Վերջին մասը մանաւանդ չա՛տ յատկանշական կ'է . — «Լուացքը տուներուն մէջ կը կատարուի . երկուշաբթի լաթ կը լուան, երեքշաբթի կ'արգլակեն, շաբթուան խրաքանչիւր օրը իրեն յատուկ աշխատութիւնը ունի ։ Հօլանտացի կիները՝ մաքրատիրութեան տեսակէտով չառ ետ կը մնան . հիմայ նիւ Եօրքցի կիներէն որոնց քով գերազանցապէս զարգացած է՝ տուն-տեղ փայլուն պահելու ճաշակը, ու շաղկապութիւն ընծայելով փոշիի հասիկին անդամ որ աչքի կը զարնէ անոնց արասթմանները զարգարող թեթեւ կերպաներուն, փայլուն տախտակամաններուն ու փափուկ տաքիկաներուն վրայ» ։

Եւ այս լուացքի, արգլակի, տնական մաքրութեան հօգածու կիները միեւնոյն կիներն են որոնք թատրոն ու պարտահանդէս կերթան, զրակոնտութեամբ կը զբաղին, ճամբարգոյթիւն կը կատարեն, կը սիրաբանեն, վիզական ամուսնութիւններ կը կնքեն ։ Մէկը միւսին արդելք չըլլար, եւ այս կէտին վրայ է որ չենք կրցած ճանչնալ Ամերիկացի կամ Եւրոպացի կինը, որքան որ կարելի է հեռուէն գաղափար կազմել՝ անոնց վրայ գիտակցաբար դրամաները կարգաւոր գէթ ։ Երկու յատկութիւն մէկտեղ կրելու անհասկացելիք մեր ցայտուն թերութիւններէն մէկն է ընդհանրապէս ։ զարտադրութիւնները քիչ ըլլալով ։ Զղլիփէ երեկոյթէ մը վերադարձող մանկամարդ օրիորդին համար՝ տանը անկիւնը մուտ կ'երեւայ յաջորդ առաւուն, կա՛մ փութադարձաբար իր թաղէն զուրս չելած կնոջ գայթակղութիւն կը պատճառէ պարահանդէսի

գաղափար ։ Աղջիկներ կան որոնք խոհանոցը կ'արհամարհեն՝ բանաստեղծութեանց հետ որ մը կարդացած կամ քիչ մը նկարչութիւն ուրիշած ըլլալու պատճառաւ, եւ ուրիշներ որոնք զպրօցին մէջ ստացուած դատախարակութիւնը ու մատուորական զարգացումը մէջակելու փոյթ չեն տանիր՝ անական աշխատութիւններով բռնաւորուած ըլլալու պատճառիւն տակ ։ Թէեւ, մէկը միւսին հեղուղնթաց տանիլը զմեար չըլլայ, ընդհանրապէս կը իր մէջ պարտականելով աղբիւր վաղելքը, կեանքի լատպոյն ըմբռնումը ։ Անոնց այս ներդաշնակութիւնը պահել զիս նալու, որ եւ է համայնքի մէջ՝ կին մը կամ միմիայն լաթ լուացող ու արգլակ ընել զիս ցող պիտի ըլլար, եւ կամ միմիայն վալու ու զաշնակ զարնող ։ Մեր մէջ, ընդհանրապէս կամ մէկը պաշտպանուած է կամ միւսը ։ Օտարէն առնուած ցայտուն ու կենդանի օրինակներ թերեւ լատպոյն տպաւորութիւն մը թողուն հայ փափուկ սեպին վրայ, զի նորապի աղջիկներուն արուելիք անակի կրթութեան տեսակէտով ։

S. Ս.

ՄԹԻՆ ՍԻՐՏ

Սիրքս՝ սեներակ մըն է մրքին,
Շատունց փակուած, լոյսէ հեռու,
Նման անոր՝ ուրեղ հերու
Քոյրս աւանդեց իր կոյս հոգին ։

Ու կը խառնեմ ես անձկագին
Մոխրակոյսը հիմ սերերու
Սրքիս մէջ՝ որ խուց մ'է մրքին,
Շատունց փակուած, լոյսէ հեռու ։

Թերեւս օր մը, սերն այցելու
Ըլլայ դարձեալ իմ հեգ սրքին .
Գուցէ վերջին պահուն կրկին
Լոյս մ'ողողէ հոգւոյս խորն ու
Սիրքս՝ որ հիմայ խուց մ'է մրքին ։

Վ.Ա.Գ.Գ.Գ.

ՍԱՐԵՐՈՒ ՏՂԱՆ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Երկինքի ինքնամոխիման պահն էր ու խաւարին ձեռքերը հազարումէկ տեղերէ կ'երկրնային ամառուան հով վերջալոյսին մէջ յաւաքար ասեղնագործելու՝ մարտած լոյսի բիւրազան նրբերանգներու եւ եթերային քմահաճօքներու փոփոխական ծաղիկներ . ծաղիկներ կտար մը ամպի ճերմակ կամ դարդադոյն թափանցիկ սնդուսին վրայ , չըջում ծառեր , լեռներու անորոշ ուրուադներ , ծմակի կամ հովիտներու քմածին մագութիւններ , թռչող թռեւեր եւ ճերմակ մարմարոյնի դոյնով բերեղի կղզիներ , ինչ որ աշխարհն ունի նիւթական ու երկինքը դոյն կրնայ ընդօրինակել վհուկի փետուրով : Յետոյ , աւալային այդ գիւթիչ պատկերներու յատակէն , չեա գիտեր ուսկէ՝ անորոշ արտամութիւն մը գիշերուան շուրջը կը մղէր , աւելով զանոնք , կամաց կամաց ուտելով . մէկ քանի վայրկեան չանցած երազներու նայ յայտնութիւն մը , պատկերներու նոր յարութիւններ՝ թէեւ աւելի պղտոր՝ ու մթին եւ սակայն աւելի մեծաւաք . կարծես աշխարհ մըն էր որ տկնթարթի մը մէջ կը ծնէր ու կը մեռնէր եթեւրին մէջ ու լայնատարած գաշտի մը վրայ տնծանօթ մէկը միշտ նոր արուեստներ կը բերէր , նոր պատկերներ կը ցանէր :

Սեղան մինակ էր անտառին մէջ :

Ինչ որ վերը լոյս ու փողփողում էր , վարը մթադնիլ , ահաւորիկ կը սկսէր . ցաւաղին սրտիւք մը կը վազէր տերեւներուն ու մաշտներուն մէջէն , հանգչելու վազող թռեւերու տրաք արաք թափեր կրկնուելով կը լազմադատկուէին , թռչունի մը ճուղցը , միջատի մը անհանդիստ շարժումը հեղհեղէ խըւովիչ կերպով կ'արձագանդէր ու ծառերուն մէջէն անխմանալի , թագուն զօրութիւն մը ծորելով՝ զանոնք սպտոնազին կը ցուցնէր . Բանի մութը կը թանձրանար , ափքան ստուերը կ'այլափոխուէր :

Սեղան մինակ էր անտառին մէջ ու կը դիտէր այս ամէնը , կը տեսնէր թէ ինչպէս գիշերը թառելու կուգար բնութեան էն վայրի լոյսին մէջ , եւ իր բիրտ հոգին տարօրինակ հեշտութիւն մը կը դդար . բուն կըրքրու ալեկոծութիւն մը կը պղպղակէր ներսէն ու կը ցնցէր զինքը , արթնցող արծիւի մը թռեւերուն ակէս որ առաւօտուն ուժգնօրէն կը թափանարէ իր ժայռին կառարէն : Կարծես իրեն այնպէս կուգար թէ իրական աշխարհը ոտքերուն ու քղանցքներուն քովէն անգին խելայեղիչ աննդով մը կը տրտուակէր ու կահոտրանար , խաւարը կը ձեւափոխէր իրմէ զամ ամէն բան . ու ծառ , ճիւղ , քար , լեռ՝ ամէնքը կը խուճապէին դէպ ի անոանման հեռաւորութիւն մը ու նոր էութիւններ , նոր ստեղծագործութիւն մը կուգար կը բռնէր ահոնց տեղը : Այս դժայտութիւնը կը գինովցնէր զինքը ու միւսնոյն ատեն կը խառնէր . հովը հեղեղատի հոսանքով կ'անցնէր զազաթնեւրուն վերեւէն եւ կարծես ազազակներու մրրիկ մը կը քաշէր կը տանէր ետեւէն , եւ ձայներու այդ հեռացող խուժանը՝ որուն յափըշտակուած կը հետեւէր ականջով՝ կարթնցնէր իր մէջ ալ տնդազին , զայրացկոտ զգացումներ : Ու սիկառ մը վառեց :

Գիշերը կատարեալ էր ա'լ . խաւարի տաւրափը զաղրած էր . երկինքէն , չեա գիտեր ո'ր անձանթ հեռաւորութեանէն՝ տխուր լոյս մը միայն կը տարածուէր , հազար մատերու կը բաժնուէր ու երազային անըմունքի ցոլակ մը կը բերէր : Հրացանը ուսին դրաւ Սեղան , չորս կողմը կուշտ նայուածք մը երկնցուց եւ յամրաքար սկսաւ քալել : Անտառին դուրս ելաւ , մէկ երկու տուրի վրայէն ցատկեց , գիւղին կածանը բռնեց ու լեռն ի վար շտկուեցաւ դէպ ի գիւղը :

Շատ վարը , ստորադը , կէս լոյս կէս խաւարի մէջ հազիւ կը նշմարուէր գիւղին խան-

ճարուրդը . պարտէզներու ամբողջութիւնն ու տուններուն հաւաքումը՝ խոշոր սեւ զանազանութիւն մըն էին՝ ուր հոս հոն ճրագի ցանցաւ աչքեր ենթադրել կուտային թէ զիւրը ամբողջ քնացած չէր . ձայն ձուն չի կար , դաշտի բոլոր կենդանութիւնը մէկ շունչով հանգստացած էր : Ապահովարար յոգնած չէր՝ այս պահուն դուրսը մնացած այդ երիտասարդը , բայց կանգ առաւ , մտածեց քիչ մը ու նստեցաւ քարի մը վրայ , երեսը միշտ դէպի զիւրը : Ասելի հեռուն , դաշտին երեսը նոյնպէս տեղ տեղ երկչոտ լոյսեր կը պլպլային , զիւղեր անոնք ալ ուր հարկաւ արթուն կեցողներ կային . գոցէ դրացնի հաւաքումներ , նշանաւաք կամ հարսնետուններ , որովհետեւ աշխատող ձեռքերը հանգիստ էին այս զիւղեր , կիրակիուտք էր : Միտքը տարուած , ինքզինքը մոռցած՝ Սեղոն կը դիտէր այդ լոյսերը ու անոնց ճամբան բռնած՝ աչքը կերթար կը կախուէր մինչեւ երգիքներէն վար ու կարծես կը տեսնէր ինչ որ կ'անցնէր կը դառնար հոն : Ահա իր գեղին մէջ վերջին լուսաւոր բիքն է որ միականի նայուածքով մը կը յամտի նայիլ գեռ եւ եթէ ան ալ իր թարթիչները գոցէ՝ գեղը պիտի քնանայ մանկան մը խաղաղ քունով :

Յամառեցաւ ինք ալ իր տեղը , մինչեւ որ յետին ճրագամանին պատրոյգն ալ իր քունը քնացաւ , այն ատեն ռաքի ելաւ նորէն , ու շարունակեց իր ճամբան , հիմա վտառ թէ հարսէն , չահիլէն , ու տանտիկիներէն էն ետքը՝ հաւաք քուն քաշող պտուաւն ալ իր առաջին կունքին մէջ էր տանը փսիկին հետ :

Շեղակի ճամբաներէ , հոս հոն վառնուած քանի մը զաղարներէ ետք , անցաւ զիւղին փողոցներէն , մօտեցաւ մեծ փայտէ դրան մը , ձեռքը երկնցուց դէպի զլանը , երկու երեք անգամ դարձնելով՝ մատովը վեր վերցուց լիւրկը , դուռը ճանչայ ետեւէն ու գոցուեցաւ :

Բ.

Գիւղին համրաւաւոր գեղեցիկն էր Աշխէն՝ որուն ետեւէն կը պտտէին բոլոր երիտասարդները , ոմանք անոր նշածեւ աչքերուն զարնուած , ուրիշներ անոր երկայն թարթիչներուն , ու ամէնքն ալ անոր ուսի հասակին . այդ աղջիկը ամբողջ կեանքն էր գեղին .

մինչեւ կէս զիւղեր դրան առջեւէն անցնողներ կային , ռաքերին գետինը քսելով եւ զիւտումաւոր հազով , իրենց սէրը , պաշտումը , անտեսած անձնակոնութիւնները պատգնելով , երեւցնելով մութին մէջ : Աղբիւրին ճամբան կը պահէին , արտին քովերը կը քսուէին ու ամէն տեղ՝ ուրիշ կրնար անցնել այդ աղջիկը՝ երիտասարդի ստուեր մը կը թափառէր :

Մէկ հատիկն էր մեծ համբայ տան մը ռաքի մըն ալ չիտցած . նուշով , շաքարով պահած էին զինքը . քաղփի լաթեր կը հագնէր որոնք այնքան ալ կը վայլեցնէր , այսպէ՛ս . սիրուն իր մարմինն հմայքով , սիրուն ալուրի նորութիւնը բերող իր արդու զարդով այդ աղքատ համայնքին մէջ՝ անուշ ու անհաս աստղիկ մըն էր՝ որուն կ'ուղղուէին զիտակցութեան եկող բոլոր տարիանքները հաւաքանքով ու կարօտով , որը իր յուսահատեցողիչ անմատչելիութեանը մէջ աւերող հրայրք մը կը տարածէր շուրջը , արտի տեսակ մը թունաւոր մթնոլորտ :

Հայրն ու մայրը՝ աչքերնին ու մաղերնին ճերմկեցուցած , իրենց աւելորած սրտին արդէն հասնելու մօտ բոլոր կեանքը այդ աղջկան սիրով կ'երկարէին , երգումնալով անոր արեւովը , ապրելով անոր բերնին շունչովը : Վերջին ու աղջիկ զուտին էր մանաւանդ եւ որովհետեւ կնկայ պարագան միշտ իր յատուկ նշանակութիւնն ունի նոյն թաղի ծնողներու ամէն հաշիւէ աղտաւ սիրոյն մէջ ալ՝ կը գուրգուրային Աշխէնին վրայ եւ քիչ անգամ նոյն հագացող աղտապատանքովը կ'անդրադառնային Սեղոնի՝ որ տանը մէջ վրթած անջատուածի օտարութիւն մը կը պահէր շատ ինքնափակ ու անհաղորդ , որով ու որ ստրկութեան հողերովը նախադրուած աչքը միշտ լուր , միշտ անտաւին : Մանկութենէն վայրի բնաղղ մը աճեր էր հողին մէջ զէպի անկոխ բարձրութիւնները՝ որոնցմէ կ'իջնէր աշնան հովն ու հեղեղը , անոր համար չէր սիրած երեք դաշտին տափարակ ու ընդ վերցուցիչ տարածութիւնը , ոչ եղն ու գլուխ մէջը՝ որ կը քաշէն հեկեկող սալին աշխատութեան , ոչ արան ու անոր հասուն ցանքերուն կանանչ բանաստեղծութիւնը , ոչ ինչ

ուրիշ, անոնք փոփոխութիւն մը չէին բերէր իր հոգւոյն մէջ, իր լեռնականի հակումն ուն փոխարինութիւն մը չէին տար բնաւ : Այս պատճառով զրեթէ չէր հետաքրքրուէր իր գիւղին անովն ու ծնողքին առանձին զրադումներովը եւ Աշխէնին համար ունեցած սէրն ալ իր հպարտութեան մէջ՝ չէր զիջաներ հակառակ յայտնումներով երեւան դալ, ամէն բան այս աղուն քով անհամեմատ կարծրութիւն մըն էր, արտականոն դասաւորութիւն մը ու ստեղծում մը :

Դիտէր թէ քոյրը գեղեցիկ էր ու գեղին մէջ աղջիկ մըն ալ չի կար անոր քովն ի վեր կեցած ատեն՝ հաւատար նմանութիւն մը կ'ուզէր, եւ անկէ անդին ալ չէր հետաքրքրուէր, մնացածին համար ինք եւ իր անուշիկ բաւական էին : Ընդ յանդուգն աղան իր համբաւին սահմանէն առդին խիզախելու փորձ պիտի ընէր եւ մօտենար իր քրոջը՝ աչքից վրայ յոնք կայ ըսելու, աղանովարար այսքան անխելք ու ինքնալստահ չի պիտի ըլլային գեղին աղաքը, անոնք որ իր անցած ատենը յարգանքով ու քիչ մըն ալ երկիրդով ճամբայ կուտային իրեն :

Ու ինքը միշտ լեռը, անտառն էր, մինչդեռ վարը դաշտը կ'երեւար, փոշին կը բարձրանար յարդի մօտիկներուն հետ, հնձողները կ'երգէին խոնջէնքի հեւութով ու կը քաղէին, սայլերը կը ճռնէին, ատոնք ամէնքը իր ոտքերուն տակ, լեռան ոտքերուն տակ կը թողուր եւ երեսը դարձուցած կ'երթար, իբր թէ բան մը կ'ապած չըլլար զինքը ատոնց ամէնուն հետ, իբր թէ զիւղացիի ու դաշտի դուակ չըլլար :

Հայրը հարկաւ աղուն այս խորհան անընդունելութիւնէն կը սրանդէր, կը ցուէր քանի որ իր եղները ուրիշին ձեռքը, իր մաճն ու լուծքը օտարին թողած, ինքը ուրիշին կարօտ եղեր էր, կուռեր, բարկացեր, լացեր, աղաչեր էր, բայց երբէք չէր կրցած զուգին այդ նախասիրութիւնը բրցնել իրմէ : Հիմա ինք իր մէջ կը մտար, համակերպելով իր կարգին, երբ միւսը համոզել՝ անկարելի եղած էր :

Միւսը, համոզուած չէր բնաւ, ընդհակառակը, լեռան մաքուր եւ հոսով ու տար-

փանքը խորունկցեր ու երկնացեր էր իր մէջ, առանց անոր չի պիտի կրնար ապրիլ, պիտի հիւնդնար, պիտի մաշէր ու ինքզինք ուտելով՝ պիտի հաւնէր : Դաշտի միամիտները՝ որ թուփի մը ծածքին տակ կը նստին ու զաճաճ մորենիի մը ստուերովը գոհ կ'ըլլան, անգամ մը գեանային ամբողջ կատար մը լեցնող կաղնիի մը ասպետական հրապոյրը, որ միտմիտակ կուրծք կուտայ հովերու կատաղութեանը եւ իր տերեւներովը աշխարհի մը քրնարը կը տաղերգէ, զիտէին անգամ մը ամպահերձ արտեւաններու վրայէն վարի հովիտներուն փոքրութիւնն ու արգահատելի ոչընչութիւնը, տեսնէին թէ դաշտի մարդը, որ չափ պղտիկ, որ չափ ողորմելի կ'երեւար՝ կ'ապած ափ մը հողին ու գոմի անասունին, մուրացկանի պէս վաղելով հացի անսպառ տափանքին ետեւէն եւ մանկան մը պէս՝ իր համար միշտ նոր մտահոգութիւններ ստեղծելով : Եւ խոպան, կոյս ու անկոխ վայրերու թափուր առանձնութիւնը կ'եղբայրանար իրեն, դորովով կը դիտէր ապառաժի մը կուրծքէն սափնքի պէս կախուած թղենիի կանանչ թուփը՝ որ եկեր մինչեւ այդ բարձունքներուն վրայ ծննդավայր շիներ էր, կը մօտենար անոր ու կը համբուէր զայն : Բընութեան կաթովը մեծցած այդ մարդատեսաց աղան՝ կը սիրէր անդգալաբար ինչ որ մարդը իր խոտոր զարսուղութեամբը մոռցած էր հեագհատ ու կորսնցուցած անոնց զգայութիւնն ու յիշատակը :

Որսը միակ հաճոյքն էր՝ որուն ետեւէն կը վազէր առանց յոգնելու՝ ծառէ ծառ, թրփուտէ թփուտ եւ երբ անդգայ կը բռնէր զայն ձեռքին մէջ՝ գաթան ժպիտը չըթունքներուն վրայ՝ կ'իրքերուն ամենէն իրանականն էր որ օտքէն մինչեւ գլուխը կը լեցնէր գինքը : Այն ատեն հօգը երգ մը կը թնդացնէր, որը դաշտէն բերած կ'ըլլար հեռը, սորված իր գեղին աղոց բերնէն, թող տալով որ անընտել ձայնի առնական ելեւէջները կ'երկերաճայն թափառին այդ վայրերուն մէջ ու կ'ընկնէին երեւալով, զանդաղելով :

Պայմանադրական, ընկալեալ կենցաղը կ'ատէր Սեդոն, անոր համար չէր իջնէր գեղը եւ իր ընտղներուն կամայականութիւնը կը զբօսցնէր որսորդութեամբ :

Գ.

Ու երբ որ այն օրը ուշ ատեն գիշերը առնէ եկած էր սովորականին համեմատ՝ արտա- մուծեան նախազգացում մը գիմաւորներ էր զինքը զրան առջեւ, անհանդիստ ու անխմանա- լի բան մը շանը նայուածքին ու քծկնքին մէջ։ Վեր եկած էր աճապարանքով եւ տե- սած որ ճրագը տակաւին կը մխար։

— Վա՛խ, ետվրո՛ւմ, վա՛խ, Սեղրա՛կ, կ'ողբար մայրը՝ ծնողներուն զարնելով ու գլխուն մաղերը փետտելով, թուփին վրայ չորնա՛ր, արեւը հողը իջնա՛ր, խորախաղա՛րը լսէի. Աշխէ՛նը՝, Աշխէ՛նը՝ . . .

Ու կը հեկեկար, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ. պա- ռաւի, գերեզմանին մէջ շակուռը նստող մե- ռելի ուրուային լաց մը, որուն արցունքները չորցած, կրտած կաշիին վրայէն կարկտհատի պէս կը թափին. քիչ մը անդին մտալլած, ահաւոր բարկութեան մը ու լքումի մէջ ծոցուորած՝ էրիկ մարդը կը նստէր անխօս ու համր։

— Պեհեցի, ետվրում, ինն տմիս սրտիս վրայ, երեք տարի գիշեր ցորեկ օրանին տակ պառկեցայ, հայած ատենս կուշտ չէի նայե- րի նազարի չի գար, բերնէս կըյրեցի իրեն կերցուցի որ սողը, սողը է՛ն սեւ ջուրը բե- րեա գլխուս, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, վա՛խ կու- նային աչքերս, լոսս քաղուէր, գետն երթամ՝ գետին ջուրը չի տանիր լէշս, որդի՛, Սեղ- րակ, քորդ մեր առնն աւրեց, էին ետ- եղաւ, իր պապուն հացն ու առնը թողաւ։

Սեղրակը տեսաւ որ թափուր էր առնը ու ամայի լռութիւն մը կը ճնշէր ամէն կողմ, կակծեցուցիչ թախծութիւն մը կը սողար բո- լոր անկիւններէն եւ պատերը զիւսկոյն ար- հաւերքով մը վար կուգային կարծես. ցիւցն վար կախուած քորջը հին չրջագետտը մեռելի լաթի մը պէս կը կախուէր ու գրող կ'երեւար աչքերուն։ Մօրը ողբը ու հօրը լլկուած, յու- սահատական վիճակը առաջին անգամն ըլլա- լով իր շուրջի մեռելական հմայաթափութեան հետ կծու եւ աւերիչ մարիկ մը բրցուցին հո- գիէն եւ զգաց որ ցուրտ, սառնադին հով մը կ'անցնի վրայէն, արցունք, բայց երեւք չպիտի կախուէին իր թարթիչներէն, քանի որ լեռան անասունի աչքերուն անձանթ կն

վառուժ էակի, մարդկային տկարութեան վկայ ջուրի այդ կաթիլները, միայն՝ գլխու տարօրինակ պոռոյտի մը պէս տեսաւ որ իր սիրական լեռները կը ցածնային ու կը բարե- բանային առջեւէն տնտիկալ երկրաշարժի մը տենդովը համակուած ու իր անձնականու- թեան բոլոր վէս ամբարտակները կը փլէին կը քայքայէին տափակցած։ Քոյրը անողա- ուէ՛ր իր հօրը առնն ու իր անուշը, անօր- նակ վատի դատաւիքութեամբ գետնէն ափու- ցելի առնէր ու իր պապեական տանը դա- վակցնելէ ետք՝ հեռանա՛ր, երթա՛ր, ո՛չ անտրտ նախատինք մըն էր ստիկա որ օճա- ձապն անգամ հազիւ պիտի փորձէր իր մօր ու անոր բոյնին։

Աշխէնը փախած էր լեռնականի մը հեա- որուն սէր առած էր իր ծնողքէն դադունի- երը ասդին գեղին թոսուն տղաքը իր անցա- տեղին ետեւէն թողած շունչը կը ծծէին, ի հեաքին վրայ տաճարի մը զգուշաւորու- թեամբը կը կոխէին, ու իր մէկ ակնարկի արժանանալու համար յօժարակամ իրենց կեանքին կէսը կը բաժնէին։ Մարդ չի գիտէ ի՛նչպէս փորձուէր էր այդ միամտաւ աղջիկն եւ ի՛նչպէս զրաւեր էին սիրաւ։

Սյա ուշ ժամուն եւ ուշ գիտակցութեան միջոցին ի՛նչ կրնար ընել սակայն ինքը՝ եղ- բայրը, եւ միթէ յանցանքի ծանր դատա- պարտութիւն մը չէ՞ր ճնշեր իր ալ ուսերը չէ՞ որ վաղը գեղին բոլոր լեզուները պիտի դառնէին, պիտի ամբաստանէին զինքը ան- քան իրաւունքով։ Քուրծը պատիւը, ինչ- պէս արիւնը եղբօրն էր. անոր թեւերով տակ պիտի մեծնար, անոր շուքին տակ պի- տի պանէր ինքզինքն ու իր կուսութիւնը եղբայրը երկաթէ ասպարն էր որ պիտի զի- մագրաւէր ամէն հետամտութեան այդ վա- դենիին՝ հաշտոյն, միջնաւ որ հասակ առնէր կոկոն տար, ու տէրը գար իր թուփին տի- րութիւն ընէր, ու տակաւին շատ ետք միջնաւ մահուան օրն ալ եղբայրը միշտ հե- ռաւոր հսկողն էր քուրծը անուան ու տի- ժանապատուութեան, էրիկէն ամիջապէս ետ- կամ անոր հաւասար իրաւունքով։ Հարա- զատ արիւն բաժնող եղբայր մը չէր կրնայ անտեսել այս ամէնը՝ առանց վատի անձնա- կոտորութիւն մը քաշելու ետեւէն։

Սեղոն չէր պահեր ոչ սիրտը, ոչ գիտակցական զգացումն ու արժանապատուութեան բնազդը :

Դուրսի խառտրին վրայ լուսնկային կաթը կը հոսէր խաղաղիկ քաղցրութեամբ մը, ու կը լուար կարծես բնութեան հիւանդ ծառերը, լոյսի եթերային ծաղկեփռի աղբիւններ կը վազէին, ուսելի կը մաղուէին երկինքն ի վար տեղ տեղ ճառագայթումի լոյն հոսանքներով, տեղ տեղ տարածուն ու ցանցնուած մշուշով, եւ վերի լուսեղէն ուրբաններէն արատաւոյ կարեկցութիւն մը թեւատարած կը ցօղար դարվար ու կը խուժէր լիւնները, դաշտերը, մինչեւ այդ սգաւոր տան երգիքն ալ :

Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ կը հեծկտար պառաւ մայրը եւ ալեսորն ալ կը հառաչէր անպարտ, Գանկարծ կարծես անհնարին ցաւի մը կրակէն տանջուած, գլուխը վար առաւ ծերուկը եւ աչքերն ու թեւերը վեր վերացեցած :

— Ձի՛ խնդաւ, օղուլ, չի ծնիս ու չի պըտդիս, արեւդ հոգը դնեն ու գերեզմանիդ համար էրկու քար չի դանուի փորուդ վրան դնիս համար, դացած տունդ փրչակ դառնայ . . .

Ու արցունքները ճերմակ մօրուքին թեւերէն կը հոսէին անդադար, կը գշուէին ու այդ խնկուած գէմքին վրայ վշտի չարչարանքը յաշտիչ կարեկցութիւն մը կը պատկերէր :

Սեղոն դուրս ելաւ, ինչպէս որ եկած էր : Դուրսի իր բոլոր կազմուածքով, ու անհետացաւ դեղին թափուր ու անմարդաձայն լուսնան մէջ՝ մինչ ճրողը իր զգոյն մեղաւ մաղձոտութիւնը կ'երկարէր քնացած տանիքներուն վրայէն եւ արթուն ու վշտակոծ ողբը կը հեծեճէր հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ :

Պ.

Ալ չ'երեւցաւ, մարդու աչքի չի հանդիպեցաւ վրէժնդիր ևզաւարը, այն օրէն երբ Աշխէնին դիակը գանուեցաւ ձորի մը մէջ արեւնոտ չափիկով : Կարմիր սրտիւք՝ մը անցաւ բոլոր գեղերուն վրայէն ու դեղին աղջիկներուն սրտէն, եւ պակուցիչ սարսափ մը ճնշեց ամէնքն ալ : Հարսները իրենց ձեռքերը դոփնոցներուն տակ տարին, ու տարիքոտ

ները մէջքներին դրած՝ պահ մը խռոված մնացին : Բայց դժբաղդ ընտանիքին դուռը պոցուած մնաց անկէ ետքը, օրովհետեւ սեւ հաւը անէծքներուն ամէնէն զժօխայնովը վայեց այդ տանը վրայ : Լքուէ՛ր, ձախողած, կիտակործան մնաց իր տեղը չարաշուք մոռացումով մը օրուն քովերէն նախապաշարումի երկիւզով կ'անցնին կը գառնան գիւղացիները եւ ճնճղուի ուրախ թեւ մը անգամ չի վար հանդիլ անոր կտուրին վրայ : Պատերուն չաղախները ջուր առած՝ քրքրեցան հեղձեալ ու թափիլ սկսան, պատուհանները՝ անխնամ՝ հովին, փութին, ու անձրևին առջեւ մնացին եւ չքաւորի թշուառութիւնը ցուցուցին վերջապէս՝ երկար առնելու պարտկելու անդօր ճիգերէ ետք :

Սեղոն ալ լոյս ցորեկով չէնիք չի մտաւ, մարդկային ստուերը իրեն համար մարակուշ անէծքը եղաւ օրմէ հեռանալ դատարարտուեցաւ : Իր մանկութեան լեռները անտառները՝ սրճան փոխուեցան անոնք ալ սակայն, թափառացած, աստուղական՝ դեղերեցաւ ուր որ ոտքը կրնար առաջնորդել զինքը աննպատակ : Տարաւ իր վիշտը իրեն հետ ստուերախիտ սաղարթներուն կամարին տակ, մոռցաւ որսը ու անոր սէրը : Միայն վերջալոյսներուն կը յառէր հողիով, զանոնք կը սիրէր իր բոլոր կրքովը, երկա՛ր երկա՛ր նայուածքը ձգած կարմիր հորիզոնին վրայ՝ չէր կշտանար, ու երբ օդերեւոյթը կ'այլափոխուէր ու կ'արուէր՝ կը խաւարէր նաեւ ինքն ալ եւ չարչարանքի օճը կը փաթթուէր կտրածքին :

Եւ հիմա որ մտքին մէջ, լեռան կուրծքը՝ քարին վրայ նստած կը դիտէ մրափող եւ կամ դեռ արթուն գիւղերը, հիմա որ մածուցիկ աղջամուղջին մէջէն հոգին ճեղքելով կանցնի դէպի իր գեղն ու հօրենական երդիքը մանաւանդ՝ չի՞ յիշեր այդ քարսիրտ աղան՝ Աշխէնը, միտքը չանդրադառնա՞ր մեղաւոր բայց հարադատ քրոջ յիշատակին :

— Է՛հ, ո՛վ դիտէ . . .

Խարբերդ

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Վ Ա Յ Ր Կ Ե Ն Ա Կ Ա Ն

ՎԻՔԹՕՐ ՀԻԿՈՅԻ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԷՆ

(ԲԱՐԻՁԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ)

Վերջացան հարկւրամեակի հանդէսները : Արուեստահանդէսէն ի վեր , առաջին մեծ տօներն էին որ կը կատարուէին ազգային մեծ հանդէսի հանգամանքով : Գրեթէ մէկ շաբաթ տեւեցին անոնք , իհարկար 25էն մինչեւ մարտ 2 , ու այսօրուան սկիզբիկ Ֆրանսացին՝ որ ամէն բան թիթեւութեամբ կ'առնէ , միահամուռ խանդով փառաբանեց իր մեծ մարդուն յիշատակը , զի իր մեծութիւնը , իր փառքն իսկ էր որ կը տօնէր : Փետրվ . 25ի ցորեկը , Օթէլ տը Վիլի փառաւոր սրահներուն մէջ , որոնց ամէն մէկը մէյմէկ երեւելի նկարիչի վրձնով նկարուած է , ընդունուեցան բանաստեղծները , օտարականներու ներկայացուցիչները : Փետրվ . 26 , հարկւրամեակի առտուն , Բանդէոնի մէջ , — ուր կը հանգչի մարմինը՝ — կապոյտ ու ոսկեթեւ վարագոյրներով , ծաղիկներով ու դրոշակներով զեղեցկապէս զարդարուած , Հանրապետութեան Նախագահին , Վիկթօր Հիւկոյի ընտանիքին , Ծերակուտականներու , Ակադեմականներու , զօրապետներու ներկայութեամբ տօնուեցաւ իր յիշատակը : Կէս օրէն վերջ , Բլառ Վիքթօր Հիւկօ , Պառիսի արձանին զետեղումը կը նուիրադրուէր , Նախագահին ներկայութեամբ : Այդ հրապարակը ու Ալքնիւ Վիքթօր Հիւկօ իրենց բոլոր երկայնութեամբ գրուածքներով , կանանչներով ու ելեկարական գոյնզգոյն ծաղիկներով զարդարուած էին : Օթիւրը , ուր մեծած ըլլալուն պարզ արձանագրութիւնը կայ , լուսավառ ճաճանչներ կը կրէր : Իրիկունը Պիւրկրավնեռու ներկայացումը , Գոմեաի Ֆրանսէզ , Նախագահին ու պաշտօնական մարմինն համար : Ծաւաթ զիւր կրկին ներկայացում ժողովուրդին համար : Երկար է Պիւրկրավնեռու նիւթը պատմել : Մունէ Սիւլլի նոյն իսկ վարպետին երե-

ւակայած ծերունի Յորն էր . Օր . Պարպանոր քեռորդի Ռէժինան , Ալպէր Լամպէր անոր նշանածը՝ Օդպէր , ու Սիլվէն՝ Պարպրուսը . բայց Տիկին Արկոն Վէպէր՝ հրաշալու գերազանց բան մըն էր Կուսնիւմարով լնուկի դերին մէջ , իր սպանիական սեւ աքերով , զփոյն դէմքով , խորունկ ձայնով նոյն ինքն վրէժխնդրութեան չ'առաւածուէր կարծես :

Թատրոնին դահլիճին մէջ (foyer) , Վոյթէր հիանալի մէկ արձանին քով , որ կարծես Հուսէնի չինածն է ու ծաղրելով կը զիտաջեւէն անցնող մերկապարանոց կիները , Հիւկոյի կիսարձանը կերեւայ ծաղիկներով շրջապատուած . բանաստեղծին աչքերը խաղաղ կը նային , երկնային ճառագայթումով ոլողւում . ամէնէն ազուրու գլուխն է որ մինչեւ հիմա տեսնուեցաւ Հիւկոյի կիսանդրիներուն մէջէն , Փետրվ . 27ին Բարիդի ուսանողներու Ընկերութիւնը , որոնք պատայ անգամը եղած է Վիքթօր Հիւկօ , մեծ հանդէս մը կատարեց Սօրպօնի անկիւթ տարունակէ . նոյն օրը ալ աւելի հոծ էր ըստմութիւնը , շարժելու աւելի չի կար : Ակադեմիայէն Պ . Ժոզէ տը Հերիտիա կը նախագահէր : Կը նշմարուէին Հիւկոյի ընտանիքը , ախաղաղականներ , զրապէտներ , Գաթիլ Մէնտէս , Ժիւլ Գլարթի , Լապլէն , Վերապի զօրագունը կը նուազէր , եւ մեծ թատրոններու նշանաւոր գերասաններ ու գերասանահիներ կ'արտասանէին ու կ'երգէին վարպետին գրածները : Հմայք մըն էր լսել իր հրաշալի տողերը այնչափ զմայլելի չեղանքով արտասանուած ու երգուած : Սիլվէն , Մունէ Սիւլլի , Տիկին Լարա ու Ալպէր Լամպէր , Օրերա Գօմիքէն եւ Օրերայէն առաջնակարգ

ձայներ : Տիկին լը Պարմի՝ Ժիննադի թառ-
րոնէն՝ որ այնչափ զգացմամբ արտասանեց
Les deux manières d'aimer, Օր. Բիերա՝
հրեշտակի պէս գեղեցիկ նորասի դերասա-
նուհի մը, որ Գովաի Թրանսէզ ընդունուած
էր նոյն օրը : Տիկնայք Պարթէ, Պրանտէզ,
Մառիէ տը Լիլ եւայն : Բանաստեղծին մօր-
մարէ գլուխը, Բիւվիտ տը Շափանի խոշոր
նկարին դիմաց զետեղուած, կարծես կը
հրճուէր իր գրածները այնչափ զգացմամբ
արտասանուելուն : Գեղարուեստական կերպով
պատրաստուած յայտագիրներ ընդունեցին հը-
րաւիրեալները : Դիշերը նուագահանդէս Օթէլ
տը Վիլ, չարաթ գիշիր պարահանդէս Օթէլ
տը Վիլ որ ամբողջ շարաթը լուսավառուած
էր չքեղապէս : Կիրակի Գրագէտներու խըն-
ջոյք Օթէլ Գօնթինանթալի մէջ, հանդէս ի
Թրքատերօ, ուր Անաթոլ Թրանս ատենա-
բանեց, ու վերջին մեծ հանդէսը Բլատ տէ
Վօթ ուր Վիկթոր Հիւկոյի երկար ժամանակ
ընակած տունը, Պ. Բօլ Մէօրիսի, իր մտերիմ
բարեկամին կողմէ, կարասիներով, յիշա-
տակներով Բարիզ քաղաքին նուիրուեցաւ
Վիքթոր Հիւկոյի Միւզէն ըլլալու համար :
Քաղաքապետութիւնը փառաւոր հանդէսով
ընդունեց այդ նուիրատուութիւնը :

Գարնանային չքեղ արեւ մը մինչեւ իրի-
կուն մասնակից է տօնախմբութեան : Հըրա-
ւիրեալներու ահագին բազմութիւնը հեռագնեա
լեցուած է հանարակաց պարտէզին այն մօտը
որ բանաստեղծին տանը գիմնացն է : մէջտեղն
է իր մէկ արձանը . Քաղաքապետութիւնը
գրեթէ ամբողջութեամբ ներկայ է . աւասիկ
բանաստեղծին սիրական թոռները՝ Ժանն
(Տիկին Շարքօ) ու Ժօրթ Հիւկօ՝ իրենց ամու-
սիններով, Տիկին Լօքրուա՝ միւս թոռը, այս
դէմքերուն վրայ ճառագայթ մը կը փնտռէք
իր հանճարէն ու կը մոռնաք որ մէկ աղջիկը
Ատէլ՝ դիւղը կը խնամուի իրր ջլախատաւոր :
Հոն է նաեւ Տիկին Սէվըրին, Ժպտուն,
անոյշ կապոյտ աչքերով, որ մեր սղբացեալ
Տիկին Տիւսաքի նմանութիւնը կուտայ քիչ մը.
հազիւ 40—45 տարեկան է ու ձիւնի պէս
սպիտակ մաշեր չուրջ կը պատեն իր աղ-
ուոր երկատարդ մնացած դէմքը . ընա՛ւ
գրագէտի արտաոք հագուստներ, ազնուական

աիկնոջ մը ճաշակով ու պարզութեամբ
հագուած է :

Ժամը ճիշտ 5է. զինուորական առաջնա-
կարգ հինգ նուագախումբ ներկայ են, ընդ-
ամէնը իւր հազար նուագածու . զինուո-
րական նուագածութիւնը կը սկսի «Մարսէյ-
եղ» օրուն կը ձայնակցին թաղային դպրոց-
ներէն ընտրուած իւր հազար դպրոցական .
ամէն մարդ ոտքի վրայ է, գլխարկները վար-
երադի մէջ ըլլալ կը թուիք, այնչափ զղխիչ
են երաժշտութիւնը ու երգերը : Երկու ա-
տենախօսութիւն Քաղաքապետութեան կողմէ
Պէթովի մէկ եղանակը կնուագութի ու կ'երգութի
Վիքթոր Հիւկոյի խօսքերով : Hymne Triom-
phalէն վերջ այդ իւր հազար աղաքները,
աշակերտները, արմաւենիի մէյմէկ ոստ
ձեռքերին ու աշակերտուհիները մէյմէկ խուրձ
ծաղիկ բռնած՝ իրարու ետեւէ կ'անցնին բա-
նաստեղծին արձանին առջեւէն, յարգանք
վրան նետելով իրենց բռնած ծաղիկները ու
ոտերը . յուզիչ է տեսարանը, կը հասնաք
ամբոխին զգացումը . անմիջապէս Վերջ Պ.
Նօթէ (Օբլբայէն) իր փառաւոր ու անոյշ
ձայնով կ'երգէ Chanson d'ancêtre օրուն
կ'ընկերանան երաժշտութիւնը ու երգեցիկ
աղաքները : Պէթովի Hymne des Enfants à
V. Hugoէն վերջ, երբ մօթը սկսած է ար-
դէն, Apothéoseն է, Ուսանան : Յանկարծ
եղեկարական լոյսերը կը վառեն բիւրաւոր
ծաղիկներ ու պարտէզին շուրջ լուսաւոր պը-
սակներու մէջ լոյս տալերով կը կարդաք,
Odes et Ballades, Les Enfants, Légende des
Siècles, Misérables, Han d'Islande եւն. եւն.
ու զինուորական երաժշտութիւնը կ'որոտայ :
Ուստիկանները կը յառաջանան, կ'առաջնորդեն,
Ժողովուրդին մուտան որ քանի մը հազար
գործաւորուհիներու միջէն ընտրուած ամենէն
գեղեցիկ աղջիկն է, Օրիորդ Ժանն Ժիրար,
կապոյտներ հագուած, եւ իր չորս սպիտա-
կազգեստ նաժիշտներով կը յառաջանայ, բա-
րեւելով երկու կողմը ու արձանին մօտենա-
լով վարդի թերթեր կը սփռէ վրան : Նոյն մի-
ջոցին թեթեւ ամպ մը կը բարձրանայ դէպ ի
բանաստեղծին տունը, տակաւ առ տակաւ
կը ցրուի ու լոյսերու մէջ ողողուած ի յայտ
կուգայ Վիքթոր Հիւկոյի մօտան՝ ձեռ-

քը արմաւենի մը բռնած : Զինուորական
կրօնականութիւնը Chant de départ կը
թնդացնէ , աղաքները կը ձայնակցին ու կը
մեկնի ընդհանուր ժողովուրդը՝ հետը տա-
նելով մէյմէկ ծաղկի ոտա՝ իրոյ յիշատակ այս
գեղեցիկ օրունան :

Բայց եթէ մէկը ուզէ Վերքթօր Հիւկոյի
գործերուն մասին տեսութիւն մը ընել , ինքն
իսկ հսկայ միտք մը ըլլալու է : Յիշենք
միայն Քաղիւղ Մէնտէսի լաւ բացատրած
քանի մը առգերը :

« Իր գործը , զլիսու պտոյտ կուտայ , բարձ-
« րանալու կամ ծռելու է զէպի Վերքթօր Հիւ-
« կոյի գործը , զի իր անհունութիւնը վերն է ,
« վարն է , ամէն կողմ է : Անդունդն է գե-
« ղեցկութեան : Այս անդունդը ահաւի ի , մի-
« անգամայն պաշտելի է . երկնային մրրիկ-
« ներով ու գեանարուղիս փոթորիկներով լե-
« ցուն է որուն մէջէն լոյսեր կ'անցնին : Հրա-
« ըտխներ զայն կ'այրեն , բայց թռչնակներ
« հետուն կ'երգեն հրեշտակային ներդաշնա-
« կութեանց իբր թեթեւ արձագանգներ . լա-
« վային վաղքին շուրջը փոքրիկ ծաղիկ-
« ներ կը բուրեն : Վերքթօր Հիւկոյի բա-
« նաստեղծութիւնը , անհունութիւն է ու
« հրապոյր , վիթխարի է ու չնորհալի : Այն .
« չափ ահաւի է որ կը պատկասիք զողջա-
« լով , աշնչափ սիրուն է որ զայն կը պաշ-
« տէք : Իր օրոտումը յանկարծ կը դադրի որ-
« պէս զի մի գուցէ ահաբեկէ փոքրիկ աղաք-
« ները , կը պարունակէ ամբողջ Մարդկու-
« թիւն մը . կը պարունակէ Տիեզերք մը » :

ԱՅԽԱՐՀԻ ԹՐՋԱՆԸ

ՇՐՋԻԿԻ ՆՕԹԵՐ

(Գ.Կ.)

11 Մարտ , 1902 , Կ. Պոլիս ,

Կատակ չէր , երբ պաղատագին կը թա-
խանձէի Բարպաի , ինծի չի բաժնել շարանէն ,
— ինչո՞ւ խելքս չի զատուիր արդեօք թզուկ
մարդոց այդ երկրէն , — չբաժնե՞լ ինծի նոր
երկրի մը անձանօթ հմայքներէն , երկրի մը ,

ուր միամտութիւնը , պարզութիւնը , խաղա-
ղիկ կենցաղն է կեանքին նշանաբանը . մար-
դոց համար , որոնք չեն ճանչցած գեռ ազիզ
մեքենայութիւնները մարդկային աղտոտ բար-
քերուն :

Ինչ որ ալ ըլլային սակայն , զիս ասինք-
նով հրապոյրները , քրիզանդէմներու աշխար-
հին , անցեղիկ պարտաւորութիւններ , վայր-
կեանէ վայրկեան ճամբու կը գնէին մեզ , չու-
տով քաղերնիս ուղղելու դէպ ի մեր տեղը ,
մեր դարձին , որուն ժամանակը ա՛լ մօտիկ-
ցած էր , ու յապաղած անգամ , մեր քմա-
հած չրջիկի զանդաղկոտ թափառումներուն
եւ աստանդական յաճանքներուն պատճառով :

Ըսի արդէն , անցեալ անգամ , երկու առ-
գով , թէ , սիպերիական երկաթուղիով ճամ-
բայ ինկած էինք զէպի արեւմուտք , վերջին
անգամ մըն ալ սառնաւանիքի այս անսահման
ու խորհրդաւոր ուղիէնստը տեսնելով , ուղ-
ղուելու համար մեր սիրականներուն քով ,
ուր մեր երկարատեւ բացակայութիւնը հար-
կաւ իր տխուր պարապը զգացուցած էր :

Մտքէս անգամ չպիտի կրնայի անցընել
երբեք , որ մը օրանց , թէ , բազը զիս սիպե-
րիական երկաթուղիին առաջին յաճախորդ-
ներէն մէկը ըլլալու պիտի արժանացնէր : Եւ
սակայն , յանդուգն բաղդախանդութիւնով մը
սխտած այս ճամբորդութեան մէջ , գործերը
անանկ ձեւ մը առին , որ , ամէնէն անիրաւա-
նալի ու անհաւանական երեւցած բանը ան-
գամ , զիւրին , անձիգ դիպուածականութիւ-
նով մը , իրական դարձաւ , ու կրնայ ըստի
թէ , մեր քմահաճ չրջիկի խնկի բաղձանք-
ներուն մէջ , բան մը պակաս չլիցայ :

Անթիւ տեղերէ ու տեսարաններէ ազա-
ւորութիւններու անանկ խառնալիթօր խրճու-
ղում մըն է լեցուած մտքիս մէջ , որ անկա-
րող կը զգամ ինքզինքս , զանոնք ճշգրիտօրէն
գասաւորելով նօթերուս վերջարանը պէտք
եղածին պէս չինելու , մահաւանդ ընթերցող-
ներու հետ վերջին խօսու ըստուքի այս վայր-
կեանիս , ուր կուրծքս տխուր բաժանումի մը
տենդոտ գիրտօքը կը զարնէ :

Սիպերիական չաղեկառքի երկար ճամբոր-
դութեան , ու չրջապատող բոլոր զմայլիկ
տեսարաններուն մէջ , ամէնէն մեծ հրճաւանք

եղաւ այն նամակը , զոր մեր ամբողջ շրջա-
գալութեան մէջ , առաջինը ըլլալով , ստացայ
սիրելիներուս քաղաքէն , Պոլիսէն , Մասիսի
խմբագրութեան կողմէ ուղղուած , ցուցուած
հասցէի մը , ուր անպատճառ պիտի ժամա-
նէինք , մտադրուած առաջադրութեան մը
համաձայն : Կայարանին մէջ ստացայ նա-
մակը , poste-restante հասցէով , ու Սդէլլա
ծածկանունին ուղղուած , — համառօտ , չոր
ու ցամաք հասցէ մը , որ սակայն կը դանդ
իր տէրը , աշխարհի հեռաւոր ծայրերուն
ուղեւորը : Ու դուք կը զբաժնայն անդին
հաճոյքը , զոր թափառաշրջիկ ուղեւորը կու-
նենայ , անծանօթ քաղաքի մը մէկ անկիւնին
մէջ գտնելով իր հասցէն կրող նամակ մը ,
որուն բովանդակութիւնը , սրչափ ալ չոր ու
անշահեկան ըլլայ ուրիշի համար , ամէնէն
մեծ ուրախութիւնը կրնայ պատճառել , իր
սիրելիներուն կարօտովը տառապող մենաու-
րիկ ուղեւորին :

Ընդդէմ քիս համաձայն , նամակը կը զբա-
նիմ թղթատունին ցուցափեղկին մէջ , ու
պաշտօնական ձեւակերպութեան էտքը , զայն
ձեռք անցնելով , անհամբեր ածապարանքով
մը կը պատուտիմ պահարանը :

Երկու տող բան է նամակին պարունա-
կութիւնը , ամէնը ամէնը , որ սակայն եր-
կարապատում թղթակցութեան մը աւելի կ'ըլ-
լայ ինծի համար :

«Սիրելի Սդէլլա ,

«Թղթակցութիւններդ , իրենց յաջորդական
անձերի թիւով , հասած են : Հրատարակուած
են ամէնքն ալ յաջորդաբար : Կը կարգաւ զա-
նոնք դարձիր» :

Հետադիւր մը պիտի կարծէիք , այս երկու
տողը , չէ՞ :

* * *

Որչափ ալ ճարտար սղապիր մը ըլլալ ջա-
նամ , նորէն չպիտի կրնամ լիովին արձանա-
դրել այն բոլոր սպաւորութիւնները , զոր
Սիպիրիայէն մինչեւ հոս ուղեւորութիւն մը
կրնայ առթել , մանաւանդ անանկ պարտ-
գայի մը մէջ ուր հետզհետէ վերջակէտին
մօտիկցած կը զգամ զրիչ :

Հիմալայէն աւելի բան մըն է ճամբոր-

դութիւնը Սիպիրիայ մէջ : Կառախուժին բա-
ւական դանդաղ գնացքը , ալ աւելի կաղեր-
ցնէ շրջապատող տեսարաններուն զեղեցիկու-
թիւնը : Հէքեաթներու մէջ ապրող վիշտի
մը պէս , որ այս տեղուանքին բնակիչը ըլլար ,
կառախուժը կը սուրայ սառած գիծերուն
վրայէն , սառ-ապակիի տախտակներ խոր-
տակելով իր անիւներուն աակ , սառի միա-
պաղաղ ու լայնատարած սպակիւններ , որոնք
միօրինակ ճարճատուտով մը կը փչրուին ,
վայրկեան մը ետքը նորէն կապելու համար
իրենց շղթան , զուգահեռական սեւ երկաթ-
ներուն վրայ : Բոլորովին ամայի չէ գիծին
երկայնքը , երբ հարաւի սահմանները կը դառ-
նայ ան : Կառախուժը երբեմն կանցնի սար-
սափիւրի մօտ անտառներէ տեսակ մը բարձ-
րաբերձ հսկայ ծառերու , որոնց հաստաւա-
զուկ ոտերէն , ամենի ջահերու պէս , սառի
անթիւ պաղորտներ կը կախուին , դիւթա-
կան հրաշալի դղեակի մը պատրանքը տալով
աչքին :

Տեղ տեղ , շրջակայքի տեսարանը , զմայ-
լելի բան է : Մեծ ու փոքր լիճեր կը տա-
րածուին հոս հոն , որոնց վրայ սառը իր մըշ-
տընջեղանակ շղթան նետած է : Հաստ մուշ-
տակներ հազած խալիկ մուրիկներ , գլուխին
թաղիքէ խոշոր գլխանոցներով , իրենց քով
առած տարէց աղոց խուսի մը , կը թափափին
լիճին վրայ , համեղ ձուկերու փնտտուքով :
Սառոյց ու ձուկ . — պիտի դարմանաք ասոր :
Բայց ակեք թէ ինչպէս կըլլայ ատիկա :
Փորձառու ձկնորսը , ակածջ դնելով սառին
վրայ , կը դանդէ ջուրին ընթացքը , եւ պղ-
տիկ ծակ մը բանալով հոն , կը նետէ կարծր :
Անօթի ձուկերը , համեղ խալիքներէն յափշտակ-
ուելով , մէկիկ մէկիկ կը բռնուին քիթեր-
նուն ծակէն , վեր քաշուելով հատիկ հատիկ :
Յնծալից ուրախութեան մը մէջ , ձկնորսին
լաճերը շրջանակ մը կը ձեւացնեն իրենց հօրը
չորսը , հաւաքելով վեր քաշուող ձուկերը ,
զորս կը նետեն կոնցնիլի նմանող նաւակի
մը մէջ , որ սառոյցներուն վրայ փօրը ծռած
կը պատկի , մինչեւ օդերուն քիչ մը տաքնալը
ու սառնամանիքներուն քակուելը : Մինչեւ
Ռուսիոյ սահմանապոլսը , ճամբորդութիւնը
հրաշալի բան մըն է , սառնամանիքի անծայ-

րածիր դաշտերուն մէջ : Անկէ անդին , տեսարանները կը փոխուին ալ :

* * *

Բայց Բեդերսպուրիը , որ այցելութեան մեր վերջին կայանը պիտի ըլլար , պիտի ըլլայ եղեր նաեւ ինծի՝ ամէնէն մեծ գիշարուածութիւն մը , թացելով քովէս Րաիպա լաւերեկամս , հնգիկ լեռներուն այդ անոյշ տղան , որուն հետ հոգիի ամէնէն տաք խանդավառանքներով կապուած էինք , կեանքի ամբողջ շրջան մը բաշխուած միասին , ամէնէն ալ անմոռանալի ու անուշ յիշատակներով չեցուն շրջանը կեանքին :

Ալ պիտի ըստնուէինք իրարմէ , հեռանալու համար յաւիտեան , պիտի երթնէր ան , զիս մինակ թողած , զէպի Հիմալայայի զբոսաշրջիկ ծործորները , ուր ալ չպիտի ունենար զիս իր քովը . . . պիտի կորսնցնէի զինքը , ա՛լ չպիտի տեսնէի իր թուխ , աղուոր զուռը , սեւ , վառվռուն աչքերուն նայուածքը , պիտի հեռանար ինձմէ՝ իր անրիժմաքուր հոգին . . . Երբեք չէի մտածած անպին երջանկութիւններուն այս տխուր վախճանը , որ անդառնալի է եղեր :

Հոգիին անհուն արտառութիւնով մը լեցուած , սքտարեկ ու մտամոլար , կը բամբռնէինք ալ իրարմէ , վերջնականապէս , ողբական հառաչանքներու մէջ մարելով ամբողջ վրդովանքն ու ալեկոծութիւնը մեր հոգիին , զորս երկինք իրարու քով նետած էր :

Երթաւ բարս՛ւ , ո՛վ անկեղծ ու մաքուր հոգի , երթաւ բարս՛ւ :

* * *

Ալ կը սպասէ՞ք որ զիսնամ , այս տխուր անմխիթարութենէն ետքը , թէ ինչպէ՛ս գտայ ինքզինքս Պոլիս : Բան մը չեմ գիտեր : Յաւի երկար գիշեր մը , մինչեւ հոս , տխուր բաժանումի մը , ու անգին կորուստի մը չարիող յիշատակը , որ միտքէս չեւարտ ինքն ի պէս բան մը կընէ այդ յիշատակը զիս , ու մէկ անգամէն կը փլցնէ հոգիին մէջ ամէն ուրախութիւն , ամէն հրճուանք :

Աչքիս բան չերեւար , ու ես որ , իբր ամբողջ աշխարհը պատող մէկը , ամէն կերպով սոնքալու իրաւունքը ունիմ , անուշ սպրուած

օրերու եւ տխուր յիշատակի մը վրդովանքովը կը տառապիմ :

Պոլիս տաք կոխելուս , քարափին ու կամուրջին վրայ , կառքերով , կը տեսնեմ շատ մը եւրոպացի շրջիկներ : « Է՛հ , — կը մտածեմ ինքնիրենս , — չէ՞ մի որ ես ալ անոնցմէ մէկն եմ , թէպէտ չըլլամ անոնց պէս միլիառատէր , է՛հ , ես ալ , այս օրուան օրս , շրջիկ մըն եմ , ես ալ պատած եմ աշխարհը , դիտեմ ամէն աեղ մեր երկրագունդին վրայ , ճանչցած եմ Երկիրը , Աշխարհը , իր ամբողջութեանը մէջ » :

Այս խորհրդածութիւններուն մէջ , ճամբան , յանկարծ միտքս կ'իյնայ Մասիսը , բարեկամները :

Ամէն բանէ առաջ , պարտականութիւն կը սեպեմ այցելութիւն մը տալ խմբագիր բարեկամներու :

Միտքս նոր տեսարաններու խառնուրդով խնդուած , մոռցեր եմ Գարաքէօյը : Տարբինակ ապաւորութիւն մը կը թողուն վրաս , սեղանաւորները , իրենց խացուցիչ կանչվռտուքով , բաղմութեան եռուղեքը , կառքերը , թրամուէյը , զորս մոռցեր եմ կատարելապէս , ինչպէս մոռցեր եմ այնչափ կարճ ճամբան Նորատունկեան խանին : Ծամբաս հարցնելու պատրուակով , Մասիս մը կ'ուզեմ ցրուիչն : Ա՛ , բովանդակութեանը մէջ կը փայլի ճաքներէնէ թարգմանութիւնս : Դուք չէ՛ք զգար թէ ինչ հաճոյքներ ես ասածք , — աշխարհի հեռուոր անկիւններէն խօսիլը սիրականներուդ հետ :

Ծամբաս չակելով , կը գտնեմ Նորատունկեան իմանը : Տարապս բոլորովին տարբեր է սովորականներէն : Ամէն մարդ ինծի կը նայի , ու չաղիր հետաքրքրութիւնով մը : Անհուն բաբախումով մը զարնէ կուրծքս : Ինչ պիտի ըսեն բարեկամներ , ինչ հարցումներ պիտի ուղղեն , ինչ պիտի պատասխանեմ : Պիտի խնդա՞ն վրաս , պիտի նախանձի՞ն : Ծռնկերս կը կթոտին իմանին սանդուղներուն վրայ : Ենչհատ հեք մը կը խեղդէ կուրծքս : Կը գողամ պարզապէս : Արդէն ձեռքս երկնցուցած եմ դրան : Կը բանամ . . .

— 0՜ . . . Bon-jour ! Մղէլա , Bien arrivé ! ասանկ , աշխարհի շրջանը , հէ՞ , — կ'ընեն ամէն կողմէ :

Պահ մը ետքը , կը քաշուիմ անկիւն մը , վերջին նօթերս հասցնելու Մասիսին :

ՍՊԻՆԼԱ

ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՒՆԵՆ

Թ Ա Ղ Ո Ւ Մ Ը

Հարսի մը պէս սաղեր զարդարեր էին զինքը — պտմեցին — ճաղին մէջ, երեսը բաց, սեւ մազերը ճերմակ շղարշի մը մէջ առնուած։ Իր նուրբ ու աղուեր հասակը՝ թէեւ հիմակ կըած, ու հաղիւ քսան տարեկան աղջկան թարմութիւնը ու հրապոյրը՝ թէեւ պրկուած դիմադիւերէն խոյս տուած արդէն, կը մատնէին գեղեցկութիւն մը որ մեղաւոր կնոջ մը գեղեցկութիւնը ըլլալուն համար իր այժմ չէր կորսնցներ։ Էօթէնի էր անունը, — ասացական անունը, — աղքատ ծնողքի մը զաւակ անշուշտ կամ ընտանեգործի, ուրք սայթաքած, կանուխէն «ինկած» մը զոր առաջին ու անդիտակից սխալանք մը դահալէթ զլտութիւն էր մինչեւ հանրատուն։ Մերթուած տարփածութիւն մը հետապնդումները, մոլեգնութեան վայրկեանի մը մէջ, ոճիրի մը յանգեցան։ Բարկեղեղանին շարթուն, իր տանը զրան առջեւ, ընկերութիւններով կեցած պահուն, երբ կը խօսուրուէր ուրախ զուարթ, դաշտին հարուածով մը գետին փոռեցաւ անկեղան։

Խեղճ աղջկը զոհ կերթար իր գեղեցկութեանը։

Ահա՛ իր ամբողջ պատմութիւնը։

Քիչ մարդ հետեւեր է՝ զագաղին, քանի մը ծանօթներ, զրացիներ, ու փողոցէն կաղմուող հետաքրքիրներու խումբ մը։ Լացող մը չիկար մէջերնին։

Վարդապետ մը — պանդուխտներու վարդապետը — ու երեք քահանայ կաթարեցին մեռելական կարգը եւ տարին թաղեցին Շիշլի գերեզմանատունը, անշուշտ բաւական հեռու «պատուաւորներու թաղ»էն, չիպըշկելու համար օսկորները հարուստ, ազնուական արկիւններուն։ Էօթէնին մեղաւորներուն թաղին մէջ ունեցաւ իր երեք կանգուն փոսը։

Եւ այսչափ ալ շատ կը տեսնուի իրեն։

Սչքիս զարկաւ — չորեքշաբթի առտու, երբ կը զրեւ այս տղերը — օրաթերթի մը

կծու քննադատութիւնը, որ զայթակղած կերեւայ եկեղեցականներու ներկայութիւնէն այդ գագաղին շուրջը, «եկեղեցական օրինաց, նուիրականութեան ու սրբութեան» կոչում կընէ, մինչեւ իսկ եկեղեցւոյ պատիւը ծախուած տեսնելով այս տեսակ արարքի մը մէջ։ Իրա՞ւ, այդքան մեծ մեղք մըն էր «Հոգեոց» մը կարգալ՝ սիրային ոճիրի մը զոհ գայող աղջկան մը զլիտուն վրայ եւ անոր հոգիին փրկելութեան համար աղօթիլը։ Թերեւս ուրիշ շատեր կան այսպէս մտածող, որոնք երեսներին ծածկած են՝ ըսելով որ եկեղեցի տարուեր է Էօթէնիին դագաղը։

Իմ ազիտութեանս մէջ՝ եկեղեցական օրէնքներուն, եւ կ'արդարացնում վարդապետն ու տէրաւորները որոնք գացին արարողութիւն կատարեցին, չա՛տ բարի գործ մը, քրիստոնէական յերողամտութեամբ։ Այդ դժբաղդ աղջկան մահուն եղերական հանգամանքն ալ բաւական չէր զինքը թողութեան արժանացնելու համար խստակրօններու աչքին, եւ դաշունահար ու արիւնլուայ մարմինը արժանի չէ՞ր որ իսա՛յ մը զրուէր վրան ու ծաղիկներով զարդարուէր դագաղը։ Խաչը՝ մեղքերուն թողութեանը համար ու ծաղիկներ՝ եւրիտաարդութեանը համար։

Եթէ բազմը բերէր որ Էօթէնի ապրէր դեռ քսան տարի, քիչ մը հարստութիւն զիղելով ու «առնախնութեան» միտ կապելով — ինչպէս կըսեն — օր մը դուրս սպրդէր այն յարկէն որուն տակ իր կեանքին գեղեցկագոյն տարիները տանջանքով, խռովանքով, ահադողով անցուցած էր — ու յաջողէր ամուսնութիւն մը կնքել, ո՞վ պիտի յիշէր՝ անոր մահուն վայրկեանին՝ երբեմնի անձնամոտոյց կինը։ Շատ մը եկեղեցականներ պիտի երթային թաղումին, ու յաջորդ օրը լրացիրները պիտի զբաղէին անոր թողած ժառանգութեան հարցովը։ Չի տեսա՞նք միթէ տառակ յաւարկաւորութիւն մըն ալ։

Բայց Էօթէնին՝ բազմը չի չինած մեռնելու դժբաղդութիւնը կուսկնայ, մանկամարդ, աղքատ ու գեղեցիկ, — մեղանչած, իրա՞ւ, բայց թերեւս ակամայ, թերեւս այն արեւը զիպուածներէն մէկուն բերմունքով որոնք ճակատագրականօրէն կը վճռեն կնոջ մը ան-

կումբը, — եւ ասոր համար կը գայթակղինք :

Աղօտնուապէս այս նամակս ալ պիտի գայ-
թակզեցնէ մաքրակրօնները , որոնք եկեղե-
ցիի սրբութեան անուանով կը խօսին ու չեն
ուզեր յիշել Մարիամ Մաղթապղեանցին : Իմ
մատածումս առեկի զդպրութիւն արդիւնք է քան
արամաբանութեան . երկրորդը կրնայ յաղթող
ըլլալ : Բայց առաջինն ալ անարդար չէ
միշտ : Ու եթէ օր մը քաղերս Շիշլիի դերեզ-
մանատան կողմը տանին զիս , եւ հանդիպիմ
անձնազոհ Էօժէնիի հողակոյտին ու անոր
վրայ զրուած վայտէ իսպին , խոյս չպիտի
տամ սարսափահար՝ կեղծ բարեպաշտի երե-
ւոյթով :

Եթէ մեր քահանաները քննադատուլ կու-
ղենք, առիթնե՞րը կը պակսին: Այս ախուր
ու սարսուղիցիկ թաղումին շուրջ՝ աւելի
կարեկցութիւնը պէտք էր որ խօսէր քան թէ
խտտաթիւնը, եւ աւելի՛ որսով պէտք էր զա-
տէինք քան մաքսով:

ՄԵՆԱՍԷՐ

3 4 3 2 4 2 2

—•—

Նկո՛ւր պըսակ մը դի՛ր սըրժիս վրայ .
 Կու՛րժիս սա՛կ գա՛րու՛ն մը կայ ժխտա՛մա՛մ .
 Նը՛ք քեզի՛ն նայի՛մ՝ հոգիս կը սա՛սսո՛ւայ
 Ի՛նչպէս կո՛նակ մը՝ յու՛նճին դե՛մ առկայ՛ժ :

Վուրժիսն չսկսեց գառնալ մը կայ՝ ճխրաւաճ
Նալուածիկի փայլուն աւգուր բեհերէն
Զոր դուն երջանիկ՝ կ'ուղղես յեղակարձ՝
Ամեն անգամ որ պէտք գիւզսնէն . . .

Նրբ հեզի նայիմ՝ հոգիս կը սարսռայ,
Եւ խրոտլիս մէջ խորունկ ու երկա՛ր
Շուրքես կը հընչեն կոչ մը բիւրեղեայ
Զոր դուն կը յսես, բայց դա՛րձեայ յես գար. . .

Ինչպէս կոհակ մը լուսնին դէմ առկայծ՝
Այնպէս իմ յոյսեր կ'երգեն, կը սպառօին . . .
Նկո՛ւր . հոս գոյլ ե . սիրե՛նք, ծածկւըւած . . .
Ունկնդրե՛նք հեւքին՝ մեր Սիրս-Քընարին :

Մ. ՌԻՉՈՒՐԼԵԱՆ

ՀԱՆՃԱՐԸ ԵՒ ՏԱՂԱՆԴԸ

Մեր այս բոլոր ըսածէն վերջ, տա-
ղանդին ժառանգականութեան հարցը կը լուծ-
ուի ինքիրմով: Որովհետեւ չեմ հաւատար
թէ տաղանդը գործարանաւորութեան մէջ
նախակազմուած բան մը ըլլայ, չեմ կրնար
նստել հաւատալ անոր ժառանգականութեանը
իսկ որ մէջ կը բերեն այս նիւթին մասին՝ իր-
եւս զինուով իրողութիւններ, չի կրնար զիս
տգաւորել, ոչ իսկ կալթնիքի ա՛յնքան ներ-
բողւած գիրքը, զոր ինքը ժառանգական
հաւանութիւն խորագրած է, դոյականին հետա-
քրքրաբար անորոշ գործածուած մը, եթէ
ընտանիքի մը մէջ միեւնոյն ուղղութեան մը
պատկանող ինքնակոչ տաղանդներու շարա-
յաջորդութիւն մը կը տեսնենք, առիկա բա-
ցարձակապէս ոչինչ կ'ապացուցանէ և ինչ
կայ աւելի բնական, երբ ողան կանուխէն,
իր հօրը կամ հօրեղբորը օրինակէն զրոյսած
ըլլայ՝ որոշուած ուղղութիւն մը տալու իր
մտածումին և Ռիչկին զատկը իր մանկու-
թենէն սկսելով չըջապատուած է բժշկական
և գիտական բնութեան ներկայացումներով,
եթէ ինքը ըթափաւ չէ, պէտք է որ ան-
վրէպ զրազուած ըլլայ այդ ներկայացումնե-
րով որոնք զինքը պիտի մզնն ընտրել իր
հօրը ասպարէզը կամ անոր առնթնակից
ասպարէզ մը, և եթէ բնօրինաւոր մարդ
մըն է ինքը, ապահովապէս լաւ պիտի գործէ
իր ընտրած ասպարէզին մէջ, այսինքն տա-
ղանդ մը պիտի ըլլայ և Ատոր համար միթէ
ժառանգած կ'ըլլայ իր հօրմէն որոշուած տա-
ղանդ մը և Ո՛չ և Մարգկալին բոլոր գործու-
նէսութիւնները կատարելապէս սորվելու իր
ընդունակութիւնը, իր հօրը օրինակովը, մի-
միայն ուղղուած է հայրական գործունէու-
թեան ուսումնասիրութեամբ և Երաթիշի մը
զաւակը տաղանդաւոր դաշնակահար մը եղած
պիտի ըլլար իր հօրը օրինակին բնական զրո-
յուածով: — Նկարիչի մը զաւակը՝ տաղանդա-
ւոր արուեստագէտ մը, եւ այլն և բոլոր այս
պարագաներուն մէջ պատշաճ՝ հայրական օրի-

(*) Շարունակութիւն թ. 8 ՄԱՅԻՍ Էն եւ վերջ :

նակին վայել միջակութիւն մը կը տեսնուի , բայց զմուտաբաւ աւելի բարձրը յառաջացող : Միեւնոյն քիտակէ բազմաթիւ տաղանդներու երեւումը ընտանիքի մը մէջ , չա՛տ հետեւցոյց ապէ՛ է տաղանդին ժառանգականութիւնը , ուղղակի ատոր հակառակն է որ կը յայտնէ , կ'աղացուցանէ թէ այն ամէն աստղաբէզի մէջ ուր մշուած է աղայ մը ընտանիքին աւանդութեամբ , կանոնաւորապէս զարգացած , կրնայ տաղանդի կարգ անցնիլ օրինակին միակ աղղեցութեամբ , առանց ատոր համար անհրաժեշտ բլլալու դործարանական մասնաւոր կազմութեան մը :

Մեր այս շօշափած կէտերէն բոլորովին տարբեր կերպով կը ներկայանայ հանճարը : Այդ բաժը հոմանիշ չէ՛՝ բաւականաչափ վարժութեամբ ստացուած ճարտարութեան ։ Բընօրինաւոր տիպար մը չէ՛՝ ան , նպատաւոր միջոցաւ լաւ դարգացած ։ Արտակարգ կազմաւորութիւն մըն է հանճարը որ բնօրինաւոր կազմաւորութիւններէն գուրա կը չեղի ։ Ջգային կեդրոնի մը , մերթ նաեւ բազմաթիւ կեդրոններու կամ նոյն իսկ բոլոր կեդրոններուն մասնաւոր զարգացումին մէջ կը կայանայ ։ Հետեւապէս արտակարգօրէն կատարեալ կերպով մը կը կատարէ բոլոր այն դործունէութիւնները զորո կը վարեն իր մէջ բացառապէս զարգացած կեդրոնները , միջատիպար մարդոյմէ չա՛տ աւելի կատարեալ կերպով , որքան ալ վարժութեամբ իրենց համապատասխանող կեդրոնները իրենց մատչելի եղող կատարելութեան ամենարարձր աստիճանին հասուցած բլլան ։ Զուտ բնախօսական աւսակէտով , իրապէս կը պարտէինք խօսիլ հանճարին վրայ այն ամէն պարագաներու մէջ ուր որ եւ է կեդրոն մը , նոյն իսկ որ եւ է հիւսուածք մը , արտակարգ կերպով մը զարգացած է , բնօրինաւոր չափէն չա՛տ անդին անցնող , Մայրաքաղաքէն պնդակազմ մարդ մը , որ կարող պիտի բլլար անխոնջ կատարելութեան ծանր աշխատութիւնները , ժամանակին բոլոր աւերումներուն ենթակայ բլլալու , քունէ զրկուած , անբաւական կերպով անուշուած , թերի՛ կրնայատար կերպով հադուած բլլալու , եւ հակառակ բոլոր ատոր , կարող նաեւ իր անողջութեանը մէջ երբեք

վնասուած չբլլալու , առանկ խառնուածքով մարդ մը պիտի կրնար կենսականութեան հանճար մը կոչուած բլլալ , որովհետեւ իր ամէնէն ստորին կեդրոնները , — այն կեդրոնները որոնք դործարանաւորութեան ամէնէն պարզ պաշտօնները , կենսական բջիջին մեքենական եւ քիմիական ամէնէն սերտ աշխատութիւնները կը վորեն , — պէտք էր որ իր մէջ արտակարգօրէն կատարեալ բլլային ։ Այս իմաստով , Միւսն աը Գոթթոն գնդերային հանճար մըն էր ։ Գնդերային հիւսուածքը իր մէջ անանկ զարգացում մը ունէր որուն ո՛չ մէկ ծանօթ մարդ նախնիներէն կրցած է հասնիլ ։ Ուստի եւ կրցաւ ընել անանկ բաներ որոնք երբեք իրմէ առաջ չէին գործադրուած , որոնք բնօրինաւոր մարդոց կարելի չէին երեւնար եւ իրենց համար ալ կարելի չէին ։ Այդ Միւսն աը Գոթթոն էր որ ձեռքով կը ճեղքէր ծառերը ։ Փայտահատի մէթոտ մըն էր ատիկա զոր ո՛չ մէկը իրմէ առաջ կրցած էր մտածել , եւ զոր չկրցին գործադրել , հակառակ ամէն վարժութեան ։ Հազիւ թէ կրցան նոյն մէթոտը փորձել չա՛տ աւելի բարակ եւ չա՛տ աւելի գլխարակի ծառերու վրայ ։ Ապահովապէս եղած են գնդերային տաղանդներ որոնք , չարունակական վարժութեամբ մը , կրցած են վերջապէս մոտադաշ կոճկերու վրայ փորձել այն յանգուզն զորմը զոր միայն գնդերային հանճարը մէկէն , առանց վարժութեան , յաջողած է կատարել հինաւորաց ծառերու վրայ , Միւսն աը Գոթթոն , իր գնդերային ուժովը , միմիայն չա՛տ չա՛տ կրնայ դասուիլ նո՛յն այն կարգին մէջ ուր կը տեսնենք մասնաւոր կերպով զօրաւոր փիղ մը կամ բացառիկ լու մը որ կրնայ իր նմաններէն չա՛տ աւելի հետեւն ցատկել ։ Մէկ քանի կենդանիներ ա՛յնպիսի կարողութիւններ ցոյց կուտան որ իրենց սեփական զգայարանք մը կը նախենթադրեն որմէ զուրկ է մարդը ։ Ելեկտրաձուկը կրնայ իր շուրջը սփռել ելեկտրական հոսանքներ , ճամբորդ ազաւնին ա՛րողջ երկար ցամաքներուն մէջէն վերստին կը գտնէ իր աղաւնետունին ճամբան ։ Այս կարողութիւնները կը պակսին մարդուն , որ զմուտաւորութիւն պիտի զգայ այդ կարողութիւնները ստանալու համար , որովհետեւ

պէտք չունի՝ ատոնց ։ Անոնց պակասը կը լեցնէ լիովին , աւելի բարձր ու աւելի ընդարձակ կարողութեամբ մը , — այսինքն դատողութեան կարողութեամբ , ելեկտրականութեան ազդիւրներ կը ստեղծէ իրեն , ելեկտրաձուլին ազդիւրներէն աւելի զօրաւոր ։ Կողմնացոյցին եւ քարտէսին միջոցաւ կը գտնէ իւր ճամբան՝ ճամբորդ աղաւնիին չափ ապահով կերպով ։

Հանձար անունը պէտք է որ վերապահենք այն էակներուն միայն , որոնց քով լացառիկ կերպով դարգացած է ո՛չ թէ ստորնա — մարդկային որ եւ է կեդրոն մը , այլ միմիայն եւ տարամբութօրէն մարդկային կեդրոն մը , մէկը այն վերին կեդրոններէն զորս մարդը միայն , բոլոր էակներուն մէջէն , կը կրէ ամբողջովին գործարանաւորութեամբ ։

Եւ որովհետեւ ուղեկային ամէնէն բարձր եւ ամէնէն մարդկային կեդրոնը դատողութեան կեդրոնն է , դատողութեան զարգացումը միայն յառաջ կը բերէ ճշմարիտ հանձար մը որ յետոյ իրաւ է որ պէտք ունի նաեւ անոր համապատասխանող կամքի զարգացումի մը , զգայարանապէս ըմբռնելի ընել տալու համար ուրիշներու իւր դատողութեան կեդրոնին աշխատութիւնը ։ Դատողութեան հանձարը ցարդ վերջին բառն է մարդկային կատարելութեան , թէ մարդկութեան գործարանական բնաշարչութիւնը ա՛լ աւելի հեռուն պիտի երթայ եւ թէ ի՞նչ ուղղութիւն պիտի առնէ , ասոնք այնպիսի բաներ են զորս պիտի կարենար գուշակել միայն դատողութեան մեծ հանձար մը , շնորհիւ արուած իրողութիւններէն՝ միջոցին եւ ժամանակին մէջ ամէնէն հեռաւոր իրողութիւնները հետեցնելու իւր կարողութեամբը ։

ՄԱՔՍ ԵՐՏՏԱՌԻ

Վ Ե Ր Զ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Հարիւրամեակ . — Մասոյս 31ին , կերակի օրը , հանդիսաւորապէս պիտի ածնուի հարիւրամեակը Իգմիրի Ս. Լուսաւորչեան Ազգ. Հիւանդանոցին , ամէն երկրի Հայերուն հա-

մակրանքին ու նպատին արժանի հաստատութիւն մը որուն հիւրընկալ յարկին տակ մէկ դարէ լի վեր պատառաբանած ու ինամուած են դարմանի կարօտ աղքատներ , պանդուխտներ մեծ մասով , Իգմիրի մէջ կատարուած հանգստակութենէն զատ , զլիաւորաբար Մանչէսթրի ազգայինները նախաձեռնութիւն ունեցան կարեւոր գումարով մը մասնակցելու այս բարենպաստի ձեռնարկին , եւ ինչպէս ծանուցուեցաւ չարթուս սկիզբը , Կ. Պոլսոյ մէջ ալ Մասնախումբ մը կազմուած է որուն անգամներն են՝ Զարեհ էֆ. Տիւլէր , Յովհաննէս էֆ. Յակոբեան , Իլիաս էֆ. Զայեան , Սարգիս էֆ. Թաշեան , Աղաթան էֆ. Թաշթապուրուն եւ Յակոբ էֆ. Գազազեան ։ Փափագելի էր որ այս Մասնախումբին հրաւերը արդիւնաւոր ըլլար եւ մայրաքաղաքի ազգայինները այս առթիւ ցոյց տային թէ հեռուէն գնահատող են միշտ Իգմիրի ազգայիններուն աշխատութեանը՝ Հիւանդանոցի մատակարարութեան աշխիւ գործին մէջ , ինչպէս որ այս վերջինները ստատարող գտնուած են միշտ Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցին եւ ուրիշ մարդասիրական հաստատութեանց ։

Ս. Պատրիարք Հայրը որ քանի մը օր իր բնակարանին մէջ աշխատեցաւ անձնական տկարութեան պատճառով , չորեքշաբթի Պատրիարքարան գնաց եւ այսօր (ուրբաթ) կը նախադասէ Խառն Ժողովի նիստին ։

Հանուրեքաւք կը ծանուցանենք թէ Արեւելի արաօնաաւէր Զարեհ էֆ. Եւստօֆեան՝ Կ. Պոլսոյ Առեւտրական Սինեակին ընդհանուր-քարտուղար անուանուած է , պահելով հանգերձ նոյն Սինեակի Լրագրին Տնօրէն-Խօսքարապետի պաշտօնը ։ Արժանաւոր զնահատում մըն է ասիկայ Զարեհ էֆ. Եւստօֆեանի կարողութեան ու աշխատասիրութեան , որուն համար ջերմապէս կը խնդակցինք ու կը շնորհաւորենք զինքը ։

Արժանաւէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՍԵԱՆ

Կ. Պոլիս , Ֆրեճանեղար եօղուռ , Թիւ 27

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 15

Բաղի սովորական ներքին հիւանդութիւններէ՝ կը դարձանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով, ստանոֆսի, աղեաց, միզական ճարտաներու հիւանդութիւնները, ջղային սկարոփիւնները, գաղիական ախտերը (սիֆիլիս եւլն) եւ մորթի հիւանդութիւնները:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալթա-Սերայի Լիսէին դէմ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. Ուր. օրերը ճէն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

Ա. Բ. Ի. Ս. Ե. ԸՆԿ

ՇՈՒԿԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՅ Ե. ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Վառանդ



Արուեստագիտական վերջին կատարեալագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանոր հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ:

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանքէ մը մրցելու առաւելութեան կը միացնէ գիններու գերազանց աժանութիւնը: Փախաբողներուն՝ քաթալօլը ձրի կը զրկուի:

Մեծաքանակ գնումքնէլ ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵԻ Կ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻՔ Վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով:

ԲԱՐԻՋ. — Պ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաբուտեռ:

ՊՈՄՊԱՆ. — Պ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔՍԱՆԻՐԻԱ. — Պ. Մ. Գալփանեան

ԳԱՀԻՐԷ. — Պ. Հ. Ռոզանթալ

ՌՈՒՍՃՈՒԳ. — Պ. Գ. Կ. Ինճիճեան որդիք:

ՎԱՌՆԱ. — Պ. Կեռն Արտիքի:

ԻՋՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան

ԶՄԻՒՌՆԻԱ. — Պ. Հայնրիխ Վառանդ:

ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիեռ Ֆերնանտէզ:

ԻԻՍԿԻԻԳ. — Պ. Մ. Գալփանեան

ՊԷՏՐՈՒԹ. — Պ. Յրանքէլ Շիֆֆեր:

ՍԱՄՍՈՆ. — Պ. Գ. Պետրոսեան եղբարք:

ՏՐԱՊԻՋՈՆ. — Պ. Արիս Կ. Ինճիճեան

ՍԵՐԱՍՏԻԱ. — Պ. Գ. Վ. Ս. Մեծատուրեան

ՌՈՏՈՒՐՈ. — Պ. Յակոբ Բազմատալ

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ

ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

Այս Բառարանին երկրորդ տպագրութենէն հաջորաւոր օրինակներու կարճ միջոցի մը մէջ վաճառուի մտենէն զօրաւոր տպացոյցն է գործին արժանեաց :

Մասնաւորապէս Ֆրանսերէն լեզուն ուսանողներուն համար պատրաստուած ըլլալով հանդերձ պիտանի եւ օգտակար է առհասարակ ամէն կարգի անձանց :

Իր պարունակութեան ճոխութեամբ : թուղթի եւ տպագրութեան մաքրութեամբ ու կազմի գեղեցիկութեամբ հայերէն հրատարակութեանց ամենէն տփանր կրնայ կոչուիլ :

Գին զօրաւոր քաղթօնէ կազմի 25 դր.

Գին ընտիր լաթակազմի 27 դր.

Կեդրոնաւեղիկն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը , Ֆիննամըլար եօգուտն , Կ. Պոլիս

ԻՒՆԻՅՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ շէնսք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամազուրի եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագուրի	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ շէնսք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամազուրի եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահարաժիններու տարուէ տարի անմիջական վճարում , որով Իւնիօնի ապահովագրուողք ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն , որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք , որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ իրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս , Կալաթա , Թահապուրուն խան , Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ